Դանիել Վարուժան

Հունձք

Կը սոթտրվին թեզանիքներ, գերանդիներ թող հեսանվին.
Այսօր երկու հազար մըշակ կը հնձեն ցորե՛նը և գարին:

Քա՜ղցր է թեղվիլ հասկերուն մեջ՝ որոնց քիստերը խարշափուն
Կը խառնըվին բաց կուրծքերու անտառացած թուխ մազերուն:

Քա՜ղցր է լողալ համառորեն որաներուն մեջեն հեղեղ.
Ըզգալ ուռիլը բազուկին երակներուն արևազեղ:

Ահավասիկ գերանդիներ, կատաղությո՛ւն փայլատակի,
Ցորեններուն մեջ իբր արծաթ կ՚ընկղմվին, դուրս կ՚ելլեն՝ ոսկի:

Հասկեր կ՚իյնան շարվեշարան, և կ՚արյունին կակաչներ լուռ.
Բըլուրներուն քողը խարտյաշ կը ծալլըվի լայնասարսուռ:

Ծըփանքներ նո՛ր ծըփանքներու ներքև ընդմիշտ կը փըլուզին.
Ալիք կ՚ըլլան ակոսին մեջ ծովե՛ր, ծովե՛ր, ծովե՛ր դեղին:

Ու կ'ընդլայնին դաշտեր, սարեր, խոզաններով միշտ քըստմընած.
Հովիտին մեջ հեղեղներ կան՝ որ կը ցամքին կամաց կամաց:

Հանկարծ թուփեր կը հատնվին, կամ կը ցըցվի քար մը ճերմակ.
Առվակ մ'հեռուն կը փալփլի, որ կը նիրհեր վասակին տակ:

Մըշակներ կան՝ որ փարչն իրենց բերնին դըրած, Արև՞ն ի վեր,
Կ'ըմպեն երկա՞ր ջուրը գըլգլուն՝ զոր աղբյուրեն հարսն է բերեր:

Ոմանք իրենց ափերուն մեջ՝ մերթ կը փըշրեն հասկ մը ատոք,
Եվ կ'օրհնեն թիվն հատիկներուն, ու կը ծամեն հետո զանոնք:

Հոտաղներ կան արտերե արտ՝ որ ժիրաժիր կը հեսանեն
Աղոտ մահիկը մանգաղին, աղմըկելով լուռ միջօրեն:

Եվ կը հնձե՞ն, միշտ կը հնձե՞ն. թևի ամեն լայն շարժումի
Ամառներու բերկրությունն է՝ որ քիստե քիստ կը ծավալի:

Օ՜, ի՞նչ կոծեր, հորիզոնե հորիզոն ի՞նչ նըվաճումներ,
Ի՞նչ հեծկըլտանք հանճարներու, ի՞նչ փըլուզվող օվկիաններ:

Ու կը հնձեն, դեռ կը հնձե՞ն. մինչև շուքերը երկարին
Եվ շըփոթվին իրարու հետ ա՛լ սահմաններն անդաստանին:

Այն ատեն լուռ ճամբուն վըրա կը տեսնըվին շարան շարան,
Հընձվորները որ դեպ իրենց տընակներուն ճրագը կ'երթան:

Գերանդիներն անոնց ուսին կը ցոլցոլան լուսնկայեն,
Կը հովանան անոնց քըրտնած կուրծքերն անուշ ծըմակներեն:

Իսկ անդորրին մեջ դաշտերուն ահա ծըղրիդ մը արթընցած
Կը լեցընե իր երգերով ամբողջ Անհունն աստեղամած: